Երիցուկ Դուշ **150** մլ

Դեղաձևը. Արտաքին օգտագործման լուծույթ, նախատեսված է կնոջ ինտիմ հիգիենայի համար:

Բաղադրություն. Երիցուկի հանուկ 0.075մլ, Մաքրված դեիոնիզացված ջուր 150մլ:

Ընդհանուր տեղեկություն կանանց համար

Երիցուկի հեշտոցային ցնցուղն օգտագործվում է հեշտոցի հիգիենայի համար, կանխարգելում է ինֆեկցիաները և վերացնում դիսկոմֆորտը:

Առողջ հեշտոց, նորմալ միկրոֆլորայով, բնական հոտով և արտադրությունով, կարևոր դեր է խաղում կնոջ ինքնազգացողության հարցում:

Հեշտոցի լվացումը ապահովում է հեշտոցի ավելի ինտենսիվ հիգիենան:

Տեղեկություն արտադրանքի մասին

Երիցուկը հանդիսանում է լայն տարածում ունեցող դեղաբույսերից, շնորհիվ իր արտահայտված հակաբորբոքային, վերականգնող և սպազմոլիտիկ ազդեցության, մինչդեռ այս բույսն ունի նաև մի շարք դեղաբուժական հատկություններ՝ հակամանրէային, հանգստացնող, ցավազրկող, հեմոստատիկ, հակաալերգիկ:

Այսպիսով, երիցուկի թերապևտիկ ազդեցության ամենահաճախ հանդիպող կողմերից մեկը, որը պայմանավորում է նրա լայն կիրառումը գինեկոլոգիայում, նրա հակամանրէային, հակաբորբոքային և վերքերի ապաքինող ազդեցությունն է: Երիցուկը նշանակվում է նաև ներքին օգտագործման համար՝ խանգարված դաշտանային ցիկլը կարգավորելու համար՝ ալգոդիսմինորեայով և կանանց սեռական օրգանների բորբոքային հիվանդություններով, ցավոտ դաշտանով, արտաքին լվացման նպատակով՝ կոլպիտի, վուլվիտի և էնդոսերվիցիտի ժամանակ:

Երիցուկ դուշը իդեալական համապատասխանում է՝

Հեշտոցային ինտենսիվ հիգիենայի համար առատ արտահոսքի դեպքում, տհաճ հոտով կամ գույնով արտահոսք, քորով, գրգռվածությամբ և այրվածքով:

Հեշտոցային վարակների կանխարգելման համար, որպես օժանդակ միջոց սնկային (խմորիչ) վարակների և բակտերիալ վարակների համար:

Հեշտոցի ընդհանուր հիգիենայի համար:

Կիրառման հաճախականությունը

Կախված է հեշտոցի վիճակից (որոշ կանայք ավելի հակված են ինֆեկցիաների), ապրելակերպից, սեռական ակտիվությունից (չպաշտպանված), դաշտանից և այլն:

Հեշտոցի նորմալ հիգիենայի համար, բավական է շաբաթական 1 անգամ օգտագործել երիցուկի դուշը:

Լրացուցիչ հեշտոցային հիգիենայի համար, օրինակ, հեշտոցի դիսկամֆորտի պրոֆիլակտիկայի համար, բավական է շաբաթը 3 անգամ կիրառել դուշը (օր ու մեջ):

Հեշտոցային խնդիրները վերացնելու և հեշտոցային վարակի բուժման լրացուցիչ խնամքի համար խորհուրդ է տրվում 5 օր շարունակ օրական 2 անգամ կիրառել դուշը:

Առավելությունները

Հարմար և իդեալական հեշտոցային ինտենսիվ հիգիենայի, հեշտոցային վարակների և հեշտոցային անհանգստության կանխարգելման համար։

Այն լավագույնս լվանում է հեշտոցը, քանի որ ունի հատուկ ծայրակալ լվացման համար:

Եթե անհարմարությունը երկար է պահպանվում, դիմեք բժշկի:

Թողարկման ձև

150 մլ փլակոն՝ N1, N3 և ստերիլ ծայրակալ: